

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ - 2022թ.

Հարցաթերթ

(տևողությունը՝ 150 րոպե)

(գնահատման քայլը՝ 0.25 միավոր)

11-12-րդ դասարաններ

1. Ի՞նչ նպատակներով է ծախսվում քաղցրահամ ջրի համաշխարհային պաշարների շուրջ 60%-ը: **0,5 միավոր**

ա) գյուղատնտեսական

գ) կոմունալ-կենցաղային

բ) արդյունաբերական

դ) տրանսպորտային

2. Լրացնել բաց թողնված բառերը:

1,5 միավոր

Էներգետիկան բաղկացած է և: Աշխարհի ամենահյուսիսային ՋրԷԿ-ը գտնվում է պետության քաղաքում, աշխարհի ամենահյուսիսային ԱԷԿ-ը՝ է, գտնվում է Ռուսաստանի Դաշնությունում, իսկ առաջին ԱԷԿ-ը շահագործվել է 1954թ.-ին Ռուսաստանի Դաշնության քաղաքում:

3. Լրացնել սխեման:

1 միավոր

Համաշխարհային օվկիանոսի ջրերի շարժումը

	պատճառ		հետևանք
Ա		→	
Բ		→	
Գ		→	
դ		→	

4. Դիտել նկարները և

3 միավոր



ա) բացատրել ռելիեֆի ի՞նչ ձև, բնության ի՞նչ երևույթ, մարդածին ի՞նչ օբյեկտներ են: 1 միավոր

բ) բացատրել դրանցից յուրաքանչյուրը: 2 միավոր

5. Օվկիանոսի հատակում ջուրն ունի 10°C ջերմություն: Հաշվել դրա խորությունը, եթե մակերևույթի ջերմաստիճանը 17°C է: 1 միավոր

6. Թվարկել գետերի անվանումները, որոնց միախառնումից ձևավորվում են Ամազոն, Օբ, Ենիսեյ և Ամուր գետերը: 2 միավոր

7. Ընդգծել մասնագիտական սխալները: 1,5 միավոր

Եվրասիա մայրցամաքում ամենաընդարձակ տարածք զբաղեցնում է բարեխառն կլիմայական գոտին, որի հարավարևելյան հատվածը զբաղեցնում են լայնատերև անտառները: Մայրցամաքում ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Բալխաշ լճի մերձակայքում, ամենացածրը՝ Թայմիր թերակղզում, ամենաշատ տեղումներ թափվում են Տիբեթի լեռնաշխարհում, ամենաքիչը՝ Նոդայ կիսանապատում: Ցամաքի ամենացածր հատվածը Կարագիե իջվածքն է: Ամենաջրառատ գետը Յանցզին է, իսկ ամենաընդարձակ ջրհավաք ավազանն ունի Օբ գետը:

8. Կազմել փոխկապակցված 4 զույգ **1 միավոր**
 Բարձրադիր մայրաքաղաք, նավահանգիստ, ամենացածր դիրք ունեցող մայրաքաղաք,
 ամենահյուսիսային քաղաք,
 Լա-Պաս, Երուսաղեմ, Բատոն Ռուժ, Լոնգյիր:
9. Ո՞ր մշակաբույսի միաժամանակյա խոշորագույն արտադրողներն են Չինաստանը,
 Հնդկաստանը, Ինդոնեզիան, Թայլանդը: **0,5 միավոր**
 ա) բամբակ, բ) եգիպտացորեն, գ) թեյ, դ) սուրճ, ե) բրինձ, զ) կաուչուկատու հետա
10. Ի՞նչ ուղղությամբ է ձգվում փողոցը, որի վրա կեսօրին տների ստվերը չի ընկնում:
0,5 միավոր
11. Դուրս գրել այն չորս երկրները, որտեղ մարդն ապրում է ծովի մակարդակից 5000 մ և
 ավելի բարձրության վրա: **1 միավոր**
- | | | |
|-------------|---------------|--------------|
| ա) Եթովպիա, | ե) Արգենտինա, | թ) Բուտան, |
| բ) Բոլիվիա, | զ) Մոնղոլիա, | ժ) Աֆղանստան |
| գ) Կամբոջա, | է) Չիլի, | |
| դ) Պերու, | ը) Չինաստան, | |
12. Պետական կառուցվածքի հատկանիշներով գտնել տրամաբանական բացառումը:
0,5 միավոր
- | | | |
|-------------|----------------|-------------|
| ա) Կամբոջա, | դ) Սան Մարինո, | է) Բրունեյ, |
| բ) Թոնգա, | ե) Անդորրա, | ը) Քուվեյթ |
| գ) Մոնակո, | զ) Հորդանան, | |
13. Ռուսական «Միրնի» գիտակայանը հարավային բևեռից հեռու է 2664 կմ, իսկ
 «Նովոլազարևսկայա» գիտակայանը՝ 1998 կմ: **2 միավոր**
- ա) աշխարհագրական ո՞ր լայնության վրա է «Միրնի» գիտակայանը,
 բ) աշխարհագրական ո՞ր լայնության վրա է «Նովոլազարևսկայա» գիտակայանը:
14. Այդ միկրոէթնոսը կազմում է իրենց երկրի բնակչության ընդհանուր թվաքանակի 20%-
 ը, խոսում են երկու լեզուների խառնուրդային դիալեկտով: Այդ երկիրը բաղկացած է երեք
 քաղաքից: Ո՞րն է այդ միկրոէթնոսը, ո՞ր երկու լեզուների խառնուրդից է առաջացել իրենց
 դիալեկտը և ո՞ր երեք քաղաքներն են դրանք: **1,5 միավոր**

15. Այդ լիճը քաղցրահամ է, գտնվում է երկու պետությունների սահմանում: Նրանից սկիզբ առնող գետը թափվում է մեկ այլ, բայց աղի լճի մեջ: Ո՞րն է այդ քաղցրահամ լիճը: Ծովի մակարդակից ի՞նչ բարձրության վրա է գտնվում: Ո՞ր երկու պետությունների սահմանում է: Ո՞ր գետն է նրանից սկիզբ առնում և ո՞ր լճի մեջ է թափվում: **1,5 միավոր**

16. Նշել այն պետությունները, որոնց տարածքում են հետևյալ արդյունաբերական շրջանները **1 միավոր**

ա) Միդլենդի, բ) Անտվերպենի, գ) Վերին Սիլեզիայի, դ) Օստրավա-Կարվինայի

Հանձնաժողովի նախագահ՝

Վ.Վ.Գրիգորյան